

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/8 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
6	«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ	<p>Բաճկոնը կիսաբամբակյա, կանաչ գունաքողարկված անջրանցիկ կտորից է, աստառը՝ մետաքսյա: Կտորի բաղադրությունը 50-52% բամբակ, 48-50% պոլիէստեր, խտությունը՝ 180-220 գրամ մ2, իսկ երանգը համաձայնեցվում է Գնորդի հետ: Բաճկոնը կոճկվում է կափույրով ծածկվող կայծակաճարմանդով: Կրծքամասում ունի երկու վրադիր գրպան՝ կափույրներով և կաչոնակներով: Ունի նաև երկու ներկարված կողային գրպան: Առջևի ձախ գրպանի վերևի մասում ասեղնագործվում են «ՔԿԾ» տառերը՝ քրեակատարողական ծառայության պետի տեղակալների համազգեստին՝ աջ գրպանի վերևի մասում՝ վերջինիս անվան, հայրանվան սկզբնատառերը և ազգանունը: Ուսադիրների ամրակները կաչոնակներով և գունաքողարկված կտորից են: Տաբատն նույն բաճկոնի կտորից է, ուղիղ կարվածքով է՝ երկու կողային ներկարված գրպանով, հետևի մասում՝ մեկ գրպանով, առջևի մասում տեղադրված է կայծակաճարմանդ, աստառը՝ մետաքսյա: Կեպին նույն կտորից է՝ հովարով: Թասակը շրջանաձև է: Փոքր գլխարկանշանն ամրացվում է ճակատային մասում (Նկար՝ 3): Տեխնիկական բնութագրի ընդհանուր պայմանները և հանդերձանքի նկարները ներկայացված են կից՝ հավելված 1-ում: ՀԱՎԵԼՎԱԾ 1 ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար 2022թ.-ի ընթացքում անհրաժեշտ քրեակատարողական ծառայողների հանդերձանքի</p>

տեխնիկական բնութագրի վերաբերյալ: Ընդհանուր պայմաններ՝ 1. Քրեակատարողական ծառայության խորհրդանշանը կիսաձվածև է, բարձրությունը՝ 100 մմ, լայնությունը՝ 78 մմ, Վաճառողի կողմից կարվում է բոլոր ձմեռային կիսաբրոյա վերարկուների, ձմեռային գունաքողարկված վերարկուների, կիսաբրոյա կիտելների, կիսբրոյա բաճկոնների, դաշտային բաճկոնների, ձմեռային դաշտային բաճկոնների, վերնաշապիկների, սվիտերների և շապիկների ձախ թևքին՝ ուսակարից 70 մմ ներքև: Խորհրդանշանի վրա պատկերված են ոսկեգույն վահան, թուր, Հայաստանի Հանրապետության զինանշանը, դրոշը և կշեռք: Վահանի վերևում գրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ», իսկ ներքևում՝ «ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» (Նկար 4): 2. Քրեակատարողական ծառայության պետի և տեղակալների (5 ծառայողներ) բոլոր ձմեռային կիսաբրոյա վերարկուների, ձմեռային գունաքողարկված վերարկուների, կիսաբրոյա կիտելների, կիսբրոյա բաճկոնների, դաշտային բաճկոնների, ձմեռային դաշտային բաճկոնների, վերնաշապիկների, սվիտերների և շապիկների աջ թևքին՝ ուսակարից 70 մմ ներքև, Վաճառողի կողմից կարվում է նաև 100 մմ բարձրությամբ և 78 մմ լայնությամբ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը (Նկար 5): 3. Գնորդի պահանջով հանդերձանքի ընդհանուր քանակի մինչև 10%-ի չափով Վաճառողը պարտավոր է կատարել անհատական չափսերի վերցնում և անհատական կար: 4. Մինչև ապրանքի մատակարարումն իրականացնելը՝ Վաճառողը պարտավոր է Գնորդի պահանջով համաձայնեցման ներկայացնել մատակարարման ենթակա ապրանքի նմուշները, նմուշը համաձայնեցնելուց հետո Վաճառողին կտրամադրվեն հանդերձանքի չափսերը, որից հետո կմատակարարվեն ապրանքները: 5. Բոլոր ապրանքները պետք է ունենան համապատասխան պիտակավորում և փաթեթավորում: Փաթեթավորման պիտակների վրա պետք է նշված լինեն տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, ամիսը և տարեթիվը: Մատակարարումը և բեռնաթափումը իրականացվելու է աշխատանքային օրերին ժամը 09.30-ից մինչև 17.00-ն մատակարարների միջոցներով և հաշվին: 6. Անհրաժեշտության դեպքում՝ Գնորդի պահանջով, Վաճառողը պարտավոր է, իր միջոցների հաշվին, մատակարարված ապրանքի խմբաքանակը, ՀՀ պետական հավաստագիր ունեցող լաբորատոր հետազոտական կենտրոններից մեկում, ենթարկել լաբորատոր փորձարկման՝ ապրանքի որակի և տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը ստուգելու նպատակով:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Масиси Гарун Кари Фабрика ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԼ ԲԿԵ-ԷԱՃԱՊՁԲ-22/8 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
6		